

**ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ  
ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ**

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ Երևանի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի)

թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է.

**1) հիմնական շենքերի և շինությունների համար՝**

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների համար՝ 105000 /մեկ հարյուր հինգ հազար/ դրամի և կառուցվող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տան կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն կետի 2-րդ ենթակետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 105000 /մեկ հարյուր հինգ հազար/ դրամ,

**2) սույն կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ չնախատեսված շենքերի և շինությունների համար՝**

ա. 200-ից 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 210000 /երկու հարյուր տասը հազար/ դրամի և շենքի (շինության) կառուցվող վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն ենթակետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը,

բ. 501-ից 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 700000 /յոթ հարյուր հազար/ դրամի և շենքի (շինության) կառուցվող վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն ենթակետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը,

գ. 1001-ից 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 1400000 /մեկ միլիոն չորս հարյուր հազար/ դրամի և շենքի (շինության) կառուցվող վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն ենթակետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը,

դ. 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ ստորև ներկայացված գոտիականության համար սահմանված դրույքաչափի և 3000 քառակուսի մետրը գերազանցող մինչև յուրաքանչյուր 3000 քառակուսի մետրի համար ստորև ներկայացված գոտիականության համար սահմանված դրույքաչափի հանրագումարի և սույն ենթակետով սահմանված՝ շենքի (շինության) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիականության գործակցի արտադրյալը.

| Գոտի  | Դրույքաչափ   |
|-------|--------------|
| 1-2   | 7000000 դրամ |
| 3-5   | 6000000 դրամ |
| 6-7   | 5000000 դրամ |
| 8-9   | 4000000 դրամ |
| 10    | 3000000 դրամ |
| 11-12 | 2000000 դրամ |

ե. սույն կետի համաձայն՝ շենքերի և շինությունների շինարարության թույլտվության համար տեղական տուրքի դրույքաչափի հաշվարկման նպատակով հիմք են ընդունվում Կառավարության որոշմամբ սահմանված՝ շինությունների տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականությանը համապատասխանող հետևյալ գործակիցները.

| Գոտի | Գոտիականության գործակից |
|------|-------------------------|
| 1-4  | 5.0                     |
| 5-8  | 4.0                     |
| 9-12 | 3.0                     |

### 3) ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 35000 /երեսունհինգ հազար/ դրամի և սույն կետի 2-րդ ենթակետով սահմանված՝ շենքի (շինության) կառուցվող վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիականության գործակցի արտադրյալը,

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 70000 /յոթանասուն հազար/ դրամի և սույն կետի 2-րդ ենթակետով սահմանված՝ շենքի (շինության) կառուցվող վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիականության գործակցի արտադրյալը:

2. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ Երևանի վարչական տարածքում նոր շենքերի և շինությունների շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման յուրաքանչյուր տարվա (այդ թվում՝ ոչ ամբողջական) համար (եթե սույն որոշման 3-րդ կետով այլ բան սահմանված չէ) տեղական տուրքը սահմանվում է՝

1) Երևան քաղաքի վարչական սահմաններում կառուցվող՝ մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման յուրաքանչյուր տարվա (այդ թվում՝ ոչ ամբողջական) համար 210000 /երկու հարյուր տասը հազար/ դրամի և կառուցվող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական (ամառանոցային) տան կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն հավելվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը,

2) այլ շենքերի և շինությունների (այդ թվում՝ հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների, ինչպես նաև Երևան քաղաքի վարչական

սահմաններում կառուցվող՝ 300 քառակուսի մետրից ավել ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի տան) շինարարության թույլտվության ժամկետների երկարաձգման յուրաքանչյուր տարվա (այդ թվում՝ ոչ ամբողջական) համար՝

ա. 200-ից 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների կամ 300-ից 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող՝ անհատական բնակելի տների համար՝ 420000 /չորս հարյուր քսան հազար/ դրամի և շենքի կամ շինության (անհատական բնակելի տան) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն հավելվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը,

բ. 501-ից 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների և անհատական բնակելի տների համար՝ 1400000 /մեկ միլիոն չորս հարյուր հազար/ դրամի և շենքի կամ շինության (անհատական բնակելի տան) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն հավելվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը,

գ. 1001-ից 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների և անհատական բնակելի տների համար՝ 2800000 /երկու միլիոն ութ հարյուր հազար/ դրամի և շենքի կամ շինության (անհատական բնակելի տան) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող՝ սույն հավելվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված գոտիականության գործակցի արտադրյալը,

դ. 3001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների և անհատական բնակելի տների համար՝ 14000000 /տասնչորս միլիոն/ դրամի և 3000 քառակուսի մետրը գերազանցող մինչև յուրաքանչյուր 3000 քառակուսի մետրի համար 14000000 /տասնչորս միլիոն/ դրամի հանրագումարի և սույն հավելվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված՝ շենքի կամ շինության (անհատական բնակելի տան) կառուցման վայրի գոտիականությանը համապատասխանող գոտիականության գործակցի արտադրյալը:

3. Երևանի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ տեղական տուրքը սահմանվում է 21000 /քսանմեկ հազար/ դրամ,

2) բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն հավելվածի 3-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա)

շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն հավելվածի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

4. Երևանի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, տեղական տուրքը սահմանվում է 35000 /երեսունհինգ հազար/ դրամ:

5. Երևանի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ տեղական տուրքը սահմանվում է 600000 /վեց հարյուր հազար/ դրամ:

6. Երևանի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում սեղմված բնական գազի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ տեղական տուրքը սահմանվում է 600000 /վեց հարյուր հազար/ դրամ:

7. Երևանի վարչական տարածքում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջները բավարարող լցավորման յուրաքանչյուր կայանում հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ տեղական տուրքը սահմանվում է 600000 /վեց հարյուր հազար/ դրամ:

8. Երևանի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի կամ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային կամ ածխաջրածնային գազերի մանրածախ առևտրի կետերում, ավտովաճման կետերում, ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տնտեսավարողի գործունեության յուրաքանչյուր վայրում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար, տեղական տուրքը սահմանվում է 180000 /մեկ հարյուր ութսուն հազար/ դրամ:

9. Երևանի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առ ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար, տեղական տուրքը սահմանվում է 50000 /հիսուն հազար/ դրամ:

10. Երևանի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում, յուրաքանչյուր եռամսյակի համար ըստ գոտիավորման տեղական տուրքը սահմանվում է համաձայն **N 1 աղյուսակի:**

11. Երևանի վարչական տարածքում օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում, յուրաքանչյուր եռամսյակի համար ըստ գոտիավորման տեղական տուրքը սահմանվում է համաձայն **N 2 աղյուսակի:**

12. Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին Երևանի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝

յուրաքանչյուր օրվա համար տեղական տուրքը սահմանվում է 500 /հինգ հարյուր/ դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար:

13. Երևանի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար տեղական տուրքը սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար՝ 250000 /երկու հարյուր հիսուն հազար/ դրամ,

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 1000000 /մեկ միլիոն/ դրամ,

3) բաղնիքների (սաունաների) համար՝ 1500000 /մեկ միլիոն հինգ հարյուր հազար/ դրամ,

4) խաղատների համար՝ 3000000 /երեք միլիոն/ դրամ,

5) շահումով խաղերի համար՝ 1500000 /մեկ միլիոն հինգ հարյուր հազար/ դրամ,

6) վիճակախաղերի համար՝ 450000 /չորս հարյուր հիսուն հազար/ դրամ:

14. Երևանի վարչական տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրականացման (համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կանոններին համապատասխան)՝ տնտեսավարողի գործունեության համար առանձնացված յուրաքանչյուր վայրում հանրային սննդի կազմակերպման և իրականացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար՝ ըստ գոտիավորման, սահմանվում է համաձայն **N 3 աղյուսակի**:

15. Երևանի վարչական տարածքում ավագանու որոշմամբ սահմանված տնային կենդանիներ պահելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար տեղական տուրքը՝ յուրաքանչյուր տնային կենդանի պահելու համար, սահմանվում է 5000 /հինգ հազար/ դրամ:

16. Երևանի ավագանու սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան՝ Երևանի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ բնակավայրերի սահմաններից դուրս գտնվող պետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը, ըստ գոտիավորման, սահմանվում է՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 6000 /վեց հազար/ դրամ,

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 10500 /տասը հազար հինգ հարյուր/ դրամ,

3) այլ արտաքին գովազդի համար՝ 4500 /չորս հազար հինգ հարյուր/ դրամ,

4) սոցիալական գովազդի համար՝ 0 /զրո/ դրամ,

5) դատարկ գովազդային վահանակների համար՝ Երևանի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար՝ սահմանված տուրքի 25 %-ի չափով,

6) եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ Երևանի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով:

17. Երևանի կամ վարչական շրջանների խորհրդանիշները (զինանշանը, անվանումը) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան կամ ապրանքների արտադրության կամ աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման

գործընթացներում, ինչպես նաև ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվություն տրամադրելու համար՝ օրացուցային տարվա համար տեղական տուրքը սահմանվում է 300000 /երեք հարյուր հազար/ դրամ:

18. Երևանի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար տեղական տուրքը սահմանվում է 10000 /տասը հազար/ դրամ:

19. Երևանի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար, տեղական տուրքը սահմանվում է 1500000 /մեկ միլիոն հինգ հարյուր հազար/ դրամ:

20. Երևանի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար, տեղական տուրքը սահմանվում է՝

1) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 7500000 /յոթ միլիոն հինգ հարյուր հազար/ դրամ.

2) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 15000000 /տասնհինգ միլիոն/ դրամ.

3) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 21000000 /քսանմեկ միլիոն/ դրամ.

4) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 30000000 /երեսուն միլիոն/ դրամ:

21. Երևանի վարչական տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է.

1) «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքի 15.2-րդ հոդվածով սահմանված սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտների (բացառությամբ հեստապարային ակումբների) համար՝ օրացուցային տարվա համար՝ 150000 /մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ,

2) հեստապարային ակումբի համար՝ օրացուցային տարվա համար՝ 1500000 /մեկ միլիոն հինգ հարյուր հազար/ դրամ:

22. Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին Երևանի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ շրջիկ առևտրի կետի միջոցով վաճառքի կազմակերպման կամ ծառայության մատուցման թույլտվության համար՝ յուրաքանչյուր ամսվա համար տեղական տուրքը սահմանվում է 50000 /հիսուն հազար/ դրամ:

23. Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին Երևանի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքով սահմանված՝ շրջածախ առևտրի իրականացման թույլտվության համար՝ մեկ անձի համար՝ օրական 500 /հինգ հարյուր/ դրամ:

24. Երևանի վարչական տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ամառային (մայիսի 1-ից հոկտեմբերի 31-ը ներառյալ) սեզոնին հանրային սննդի ծառայության կազմակերպման թույլտվության համար տեղական տուրքը՝ մեկ քառակուսի մետրի համար, սահմանվում է 30000 /երեսուն հազար/ դրամ:

25. Երևանի վարչական տարածքում հանրային սննդի ծառայություն մատուցող անձանց՝ տվյալ օբյեկտին հարակից ընդհանուր օգտագործման տարածքներում ձմեռային (նոյեմբերի 1-ից ապրիլի 30-ը ներառյալ) սեզոնին հանրային սննդի

ծառայության կազմակերպման թույլտվության համար տեղական տուրքը՝ մեկ քառակուսի մետրի համար, սահմանվում է 30000 /երեսուն հազար/ դրամ:

Աղյուսակ N1

**Երևանի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության դրույքաչափեր**

1. Երևանի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում տեղական տուրքը սահմանվում է.

| գոտի         | մինչև 26 քմ. | 26-ից մինչև 50 քմ. | 50-ից մինչև 100 քմ. | 100-ից մինչև 200 քմ. | 200-ից մինչև 500 քմ. | 500 և ավելի քմ. |
|--------------|--------------|--------------------|---------------------|----------------------|----------------------|-----------------|
| 1-ին         | 17,500       | 22,750             | 35,000              | 43,750               | 78,750               | 175,000         |
| 1-ին բակային | 14,000       | 18,200             | 28,000              | 35,000               | 63,000               | 140,000         |
| 2-րդ         | 10,500       | 13,650             | 21,000              | 26,250               | 47,250               | 105,000         |
| 2-րդ բակային | 8,225        | 10,692             | 16,450              | 20,562               | 37,012               | 82,250          |
| 3-րդ         | 6,825        | 8,872              | 13,650              | 17,062               | 30,712               | 68,250          |
| 4-րդ         | 4,200        | 5,460              | 8,400               | 10,500               | 18,900               | 42,000          |

2. Սույն հավելվածի իմաստով գոտիները ներառում են հետևյալ փողոցները և տարածքները.

**1-ին գոտի**

| վարչական շրջան | փողոցի և տարածքի անվանում                           |
|----------------|-----------------------------------------------------|
| Կենտրոն        | Աբովյան փողոց                                       |
| Կենտրոն        | Ագաթանգեղոսի փողոց                                  |
| Կենտրոն        | Ալեք Մանուկյան փողոց                                |
| Կենտրոն        | Ամիրյան փողոց                                       |
| Կենտրոն        | Արգիշտի փողոց                                       |
| Կենտրոն        | Բայրոնի փողոց                                       |
| Կենտրոն        | Բուզանդի փողոց                                      |
| Կենտրոն        | Սուրբ Գրիգոր Լուսավորչի փողոց                       |
| Կենտրոն        | Եզնիկ Կողբացու փողոց                                |
| Կենտրոն        | Երվանդ Քոչարի փողոց                                 |
| Կենտրոն        | Զաքյան փողոց                                        |
| Կենտրոն        | Թումանյան փողոց                                     |
| Կենտրոն        | Թամանյան փողոց                                      |
| Կենտրոն        | Իսահակյան փողոց                                     |
| Կենտրոն        | Իտալիայի փողոց                                      |
| Կենտրոն        | Լեոյի փողոց                                         |
| Կենտրոն        | Խանջյան փողոց                                       |
| Կենտրոն        | Խորենացի փողոց (Սարյան փողոցից մինչև Նար-Դոս փողոց) |
| Կենտրոն        | Կորյունի փողոց                                      |

|         |                                                           |
|---------|-----------------------------------------------------------|
| Կենտրոն | Հանրապետության փողոց                                      |
| Կենտրոն | Հերացու փողոց                                             |
| Կենտրոն | Հին Երևանցու փողոց                                        |
| Կենտրոն | Հյուսիսային պողոտա                                        |
| Կենտրոն | Մարկ Գրիգորյան փողոց                                      |
| Կենտրոն | Սարյան փողոց                                              |
| Կենտրոն | Մաշտոցի պողոտա                                            |
| Կենտրոն | Մարշալ Բաղրամյան պողոտա                                   |
| Կենտրոն | Մոսկովյան փողոց                                           |
| Կենտրոն | Նալբանդյան փողոց                                          |
| Կենտրոն | Նար-Դոսի փողոց                                            |
| Կենտրոն | Չարենցի փողոց                                             |
| Կենտրոն | Պարոնյան փողոց                                            |
| Կենտրոն | Պուշկինի փողոց                                            |
| Կենտրոն | Սայաթ-Նովայի պողոտա                                       |
| Կենտրոն | Վազգեն Սարգսյան փողոց                                     |
| Կենտրոն | Վարդանանց փողոց                                           |
| Կենտրոն | Տերյան փողոց                                              |
| Կենտրոն | Տիգրան Մեծի պողոտա (Հանր. հրապարակից մինչև Նար-Դոս փողոց) |
| Կենտրոն | Տպագրիչների փողոց                                         |
| Կենտրոն | Արամի փողոց                                               |
| Կենտրոն | Բեյրութի փողոց                                            |
| Կենտրոն | Դեղատան փողոց                                             |
| Կենտրոն | Զորյան փողոց                                              |
| Կենտրոն | Իսրայելյան փողոց                                          |
| Կենտրոն | Զորափի փողոց                                              |
| Կենտրոն | Մելիք-Ադամյան փողոց                                       |
| Կենտրոն | Շարիմանյան փողոց                                          |
| Կենտրոն | Ֆիրդուսու փողոց                                           |
| Կենտրոն | Ավագ Պետրոսյան փողոց                                      |
| Կենտրոն | Գրիգոր Քոչարի փողոց                                       |
| Կենտրոն | Մհեր Մկրտչյան փողոց                                       |
| Կենտրոն | Սպենդիարյան փողոց                                         |
| Կենտրոն | Քաջազնունու փողոց                                         |
| Կենտրոն | Մյասնիկյան պողոտա                                         |
| Կենտրոն | Արշակունյաց պողոտա                                        |
| Կենտրոն | Անտոն Քոչինյան փողոց                                      |
| Կենտրոն | Ղազար Փարպեցու փողոց                                      |
| Կենտրոն | Պոռշյան փողոց                                             |
| Կենտրոն | Անտառային փողոց                                           |
| Կենտրոն | Օղակաձև զբոսայգի                                          |
| Կենտրոն | Զարուբյան փողոց                                           |
| Կենտրոն | Սարմենի փողոց                                             |
| Կենտրոն | Աղայան փողոց                                              |

|                  |                                                              |
|------------------|--------------------------------------------------------------|
| Կենտրոն          | Մակար Եկմայան փողոց                                          |
| Կենտրոն          | Ծիծեռնակաբերդի խճուղի                                        |
| Կենտրոն          | Դերենիկ Դեմիրճյան փողոց                                      |
| Կենտրոն          | Ծովակալ Իսակովի պողոտա                                       |
| Կենտրոն          | Զարոբյան փողոց                                               |
| Կենտրոն          | Ասրիկ փողոց                                                  |
| Կենտրոն          | Գևորգ Էմինի փողոց                                            |
| Կենտրոն          | Կարեն Դեմիրճյան պողոտա                                       |
| Կենտրոն          | Ձորագյուղ ազգագրական թաղ.                                    |
| Կենտրոն          | Անրի Վերնոյի փողոց                                           |
| Կենտրոն          | Ռաֆայել Լեմկինի փողոց                                        |
| Կենտրոն          | Սիլվա Կապուտիկյան փողոց                                      |
| Կենտրոն          | Հնդկաստանի փողոց                                             |
| Կենտրոն          | Լեոնիդ Ազգալոյան փողոց                                       |
| Կենտրոն          | Վերին Անտառային փողոց                                        |
| Արաբկիր          | Մարշալ Բաղրամյան պողոտա                                      |
| Արաբկիր          | Կոմիտասի պողոտա                                              |
| Արաբկիր          | Բարեկամության հրապարակ                                       |
| Արաբկիր          | Պոռչյան փողոց                                                |
| Արաբկիր          | Վազգեն Առաջին Վեհափառի փողոց /Նախկին անվանում՝ Կասյան փողոց/ |
| Արաբկիր          | Կիևյան փողոց                                                 |
| Նոր Նորք         | Գայի պողոտա                                                  |
| Նոր Նորք         | Մյասնիկյան պողոտա                                            |
| Շենգավիթ         | Ծովակալ Իսակովի պողոտա                                       |
| Մալաթիա-Սեբաստիա | «Զվարթնոց» օդանավակայան                                      |
| -                | Հրազդանի կիրճ. (ամբողջ երկայնքով մինչև Երևանյան լիճ)         |

## 2-րդ գոտի

| վարչական շրջան | փողոցի և տարածքի անվանում   |
|----------------|-----------------------------|
| Աջափնյակ       | Աշտարակի խճուղի             |
| Աջափնյակ       | Բաշինջաղյան փողոց           |
| Աջափնյակ       | Գրիգոր Հասրաթյան փողոց      |
| Աջափնյակ       | Քրրք Քրրքոյան փողոց         |
| Աջափնյակ       | Հալաբյան փողոց              |
| Աջափնյակ       | Մազմանյան փողոց             |
| Աջափնյակ       | Մարգարյան փողոց             |
| Աջափնյակ       | Շինարարների փողոց           |
| Աջափնյակ       | Շիրազի փողոց                |
| Աջափնյակ       | Ջանիբեկյան փողոց            |
| Աջափնյակ       | Սեբաստիայի փողոց            |
| Աջափնյակ       | Բեկնազարյան փողոց           |
| Աջափնյակ       | Մետաքսյա Սիմոնյանի փողոց    |
| Աջափնյակ       | Վարդուհի Վարդերեսյանի փողոց |

|          |                         |
|----------|-------------------------|
| Աջափնյակ | Եգիպտոսի հրապարակ       |
| Ավան     | Աճառյան փողոց           |
| Ավան     | Մյասնիկյան պողոտա       |
| Ավան     | Մարշալ Բաբաջանյան փողոց |
| Ավան     | Մարշալ Խուդյակովի փողոց |
| Ավան     | Ռուբինյանց փողոց        |
| Ավան     | Գալի պողոտա             |
| Արաբկիր  | Ազատության պողոտա       |
| Արաբկիր  | Նաիրի Զարյան փողոց      |
| Արաբկիր  | Հակոբ Հակոբյան փողոց    |
| Արաբկիր  | Հրաչյա Քոչարի փողոց     |
| Արաբկիր  | Վահրամ Փափազյան         |
| Արաբկիր  | Վաղարշյան փողոց         |
| Արաբկիր  | Թբիլիսյան խճուղի        |
| Արաբկիր  | Բաբայան փողոց           |
| Արաբկիր  | Գյուլբենկյան փողոց      |
| Արաբկիր  | Լեո Կամսարի փողոց       |
| Դավթաշեն | Անաստաս Միկոյան փողոց   |
| Դավթաշեն | Սասնա Ծռեր փողոց        |
| Դավթաշեն | Տիգրան Պետրոսյան փողոց  |
| Դավթաշեն | Սամվել Գևորգյան փողոց   |
| Դավթաշեն | Աշտարակի խճուղի         |
| Դավթաշեն | Դավթաշեն 1-ին թաղամաս   |
| Դավթաշեն | Դավթաշեն 2-րդ թաղամաս   |
| Դավթաշեն | Դավթաշեն 3-րդ թաղամաս   |
| Դավթաշեն | Դավթաշեն 4-րդ թաղամաս   |
| Էրեբունի | Ազատամարտիկների պողոտա  |
| Էրեբունի | Աթոյան փողոց            |
| Էրեբունի | Այվազովսկու փողոց       |
| Էրեբունի | Արցախի փողոց            |
| Էրեբունի | Գաջեգործների փողոց      |
| Էրեբունի | Դավիթ-Բեկի փողոց        |
| Էրեբունի | Էրեբունի փողոց          |
| Էրեբունի | Խորենացու փողոց         |
| Էրեբունի | Քրիստափորի փողոց        |
| Էրեբունի | Մուրացանի փողոց         |
| Էրեբունի | Ռոստովյան փողոց         |
| Էրեբունի | Տիգրան Մեծի պողոտա      |
| Էրեբունի | Տիտոգրադյան փողոց       |
| Էրեբունի | Խաղաղ Դոնի փողոց        |
| Էրեբունի | Բելինսկու փողոց         |
| Էրեբունի | Նուբարաշենի փողոց       |
| Էրեբունի | Սասունցի Դավթի փողոց    |
| Կենտրոն  | Բրյուսովի փողոց         |
| Կենտրոն  | Սարալանջի փողոց         |

|                  |                                                             |
|------------------|-------------------------------------------------------------|
| Կենտրոն          | Քրիստափորի փողոց                                            |
| Կենտրոն          | Խորենացու փողոց (Նար-Դոս փողոց դեպի Խորենացու 4-րդ նրբանցք) |
| Կենտրոն          | Տիգրան Մեծի (Նար-Դոս փողոց դեպի Քրիստափորի փողոց)           |
| Կենտրոն          | Աթենքի փողոց                                                |
| Կենտրոն          | Լենինգրադյան փողոց                                          |
| Կենտրոն          | Սերգեյ Փարաջանովի փողոց                                     |
| Կենտրոն          | Խորեն Աբրահամյան փողոց                                      |
| Մալաթիա-Սեբաստիա | Առնո Բաբաջանյան փողոց                                       |
| Մալաթիա-Սեբաստիա | Անդրանիկի փողոց                                             |
| Մալաթիա-Սեբաստիա | Քրրք Քրրքորյան փողոց                                        |
| Մալաթիա-Սեբաստիա | Սեբաստիա փողոց                                              |
| Մալաթիա-Սեբաստիա | Սվաճյան փողոց                                               |
| Մալաթիա-Սեբաստիա | Տիչինայի փողոց                                              |
| Մալաթիա-Սեբաստիա | Դեֆանս Հաուզինգ թաղամաս                                     |
| Մալաթիա-Սեբաստիա | Րաֆֆու փողոց                                                |
| Մալաթիա-Սեբաստիա | Իսակովի պողոտա                                              |
| Մալաթիա-Սեբաստիա | Գուսան Շերամի փողոց                                         |
| Մալաթիա-Սեբաստիա | Մալաթիայի փողոց                                             |
| Մալաթիա-Սեբաստիա | Օհանովի փողոց                                               |
| Մալաթիա-Սեբաստիա | Ծիծեռնակաբերդի խճուղի                                       |
| Մալաթիա-Սեբաստիա | Մոնթե Մելքոնյան փողոց                                       |
| Նոր Նորք         | Թևոսյան փողոց                                               |
| Նոր Նորք         | Ալեքսանդր Միքայելյան փողոց                                  |
| Նոր Նորք         | Բագրևանդի փողոց                                             |
| Նոր Նորք         | Արտեմ Միկոյան փողոց                                         |
| Նոր Նորք         | Սամվել Սաֆարյան փողոց                                       |
| Նոր Նորք         | Դավիթ-Բեկի փողոց                                            |
| Նորք-Մարաշ       | Արմենակ Արմենակյան փողոց                                    |
| Նորք-Մարաշ       | Դավիթ Բեկի փողոց                                            |
| Նորք-Մարաշ       | Հովսեփյան փողոց                                             |
| Շենգավիթ         | Արշակունյաց պողոտա                                          |
| Շենգավիթ         | Արտաշատի խճուղի                                             |
| Շենգավիթ         | Արտաշեսյան փողոց                                            |
| Շենգավիթ         | Բագրատունյաց փողոց                                          |
| Շենգավիթ         | Գարեգին Նժդեհի փողոց                                        |
| Շենգավիթ         | Մանանդյան փողոց                                             |
| Շենգավիթ         | Մայիսի 9 փողոց                                              |
| Շենգավիթ         | Նորագավիթ 1-ին փողոց                                        |
| Շենգավիթ         | Շիրակի փողոց                                                |
| Շենգավիթ         | Տարոնցու փողոց                                              |
| Շենգավիթ         | Եղբայրության փողոց                                          |
| Շենգավիթ         | Թամանցիների փողոց                                           |
| Շենգավիթ         | Չելսովի փողոց                                               |
| Շենգավիթ         | Քրիստափորի փողոց                                            |

|                 |                           |
|-----------------|---------------------------|
| Շենգավիթ        | Ամերիկյան փողոց           |
| Քանաքեռ-Զեյթուն | Ազատության պողոտա         |
| Քանաքեռ-Զեյթուն | Դավիթ Անհաղթի փողոց       |
| Քանաքեռ-Զեյթուն | Թբիլիսյան խճուղի          |
| Քանաքեռ-Զեյթուն | Թբիլիսյան խճուղու նրբանցք |
| Քանաքեռ-Զեյթուն | Ռուբինյանց փողոց          |
| Քանաքեռ-Զեյթուն | Սևակի փողոց               |
| Քանաքեռ-Զեյթուն | Զաքարիա Սարկավազի փողոց   |
| Քանաքեռ-Զեյթուն | Կարապետ Ուլնեցու փողոց    |

### 3-րդ գոտի

| վարչական շրջան | փողոցի և տարածքի անվանում  |
|----------------|----------------------------|
| Աջափնյակ       | Արա Սարգսյան փողոց         |
| Աջափնյակ       | Աբելյան փողոց              |
| Աջափնյակ       | Ալիխանյան եղբայրների փողոց |
| Աջափնյակ       | Առաքելյան փողոց            |
| Աջափնյակ       | Արզումանյան փողոց          |
| Աջափնյակ       | Գևորգ Զավուշի փողոց        |
| Աջափնյակ       | Եղիազարյան փողոց           |
| Աջափնյակ       | Զոհրապի փողոց              |
| Աջափնյակ       | Էստոնական փողոց            |
| Աջափնյակ       | Թերլեմեզյան փողոց          |
| Աջափնյակ       | Լևոնյան փողոց              |
| Աջափնյակ       | Լուկաշինի փողոց            |
| Աջափնյակ       | Խորեն Խաչատրյան փողոց      |
| Աջափնյակ       | Կարապետյան փողոց           |
| Աջափնյակ       | Հասմիկի փողոց              |
| Աջափնյակ       | Մարտիրոսյան փողոց          |
| Աջափնյակ       | Մելքումովի փողոց           |
| Աջափնյակ       | Զուխաջյան փողոց            |
| Աջափնյակ       | Պարսեղովի փողոց            |
| Աջափնյակ       | Ռուստամյան փողոց           |
| Աջափնյակ       | Սիլիկյան թաղամաս           |
| Աջափնյակ       | Սիսակյան փողոց             |
| Աջափնյակ       | Վշտունու փողոց             |
| Աջափնյակ       | Սահակ Պարթևի փողոց         |
| Ավան           | Արտաշես Շահինյան փողոց     |
| Ավան           | Ալմա-Աթայի փողոց           |
| Ավան           | Աշխաբադի փողոց             |
| Ավան           | Ավանի համարային փողոցներ   |
| Ավան           | Դուշանբեի փողոց            |
| Ավան           | Թամրուշի փողոց             |
| Ավան           | Ծարավ Աղբյուր փողոց        |

|         |                                |
|---------|--------------------------------|
| Ավան    | Դավիթ Մալյան փողոց             |
| Ավան    | Նվեր Սաֆարյան փողոց            |
| Ավան    | Տաշքենդի փողոց                 |
| Ավան    | Ջահանգիր աղայի փողոց           |
| Արաբկիր | Վիկտոր Համբարձումյան փողոց     |
| Արաբկիր | Ավետիս Ահարոնյան               |
| Արաբկիր | Ավետ Ավետիսյան փողոց           |
| Արաբկիր | Ադոնցի փողոց                   |
| Արաբկիր | Այգեկցու փողոց                 |
| Արաբկիր | Գրիբոեդովի փողոց               |
| Արաբկիր | Մամիկոնյանց փողոց              |
| Արաբկիր | Վրացական փողոց                 |
| Արաբկիր | Շիրվանզադեի փողոց              |
| Արաբկիր | Տիգրանյան փողոց                |
| Արաբկիր | Այգեծորի փողոց                 |
| Արաբկիր | Արաբկիրի համարային փողոց       |
| Արաբկիր | Արծրունու փողոց                |
| Արաբկիր | Արղության փողոց                |
| Արաբկիր | Բարբյուսի փողոց                |
| Արաբկիր | Բուդաղյան փողոց                |
| Արաբկիր | Բուդապեշտի փողոց               |
| Արաբկիր | Գուլակյան փողոց                |
| Արաբկիր | Սբ. Աբգար թագավորի անվան փողոց |
| Արաբկիր | Երզնկյան փողոց                 |
| Արաբկիր | Թավրիզյան փողոց                |
| Արաբկիր | Խնկո-Ապոր փողոց                |
| Արաբկիր | Արամ Խաչատրյան փողոց           |
| Արաբկիր | Ղափանցյան փողոց                |
| Արաբկիր | Մալխասյանց փողոց               |
| Արաբկիր | Մանուշյան փողոց                |
| Արաբկիր | Նիկողայոս Տիգրանյան փողոց      |
| Արաբկիր | Շահսուվարյան փողոց             |
| Արաբկիր | Ջեյմս Բրայսի փողոց             |
| Արաբկիր | Ռիգայի փողոց                   |
| Արաբկիր | Սևաստոպոլյան փողոց             |
| Արաբկիր | Սեպուհի փողոց                  |
| Արաբկիր | Սոսեի փողոց                    |
| Արաբկիր | Սունդուկյան փողոց              |
| Արաբկիր | Սևքարեցի Սաքոյի փողոց          |
| Արաբկիր | Վահագն Դավթյան փողոց           |
| Արաբկիր | Տոլբուխինի փողոց               |
| Արաբկիր | Քեռու փողոց                    |
| Արաբկիր | Օրբելի եղբայրների փողոց        |
| Արաբկիր | Հայրիկ Մուրադյան փողոց         |
| Արաբկիր | Ռուբեն Սևակի փողոց             |

|          |                                      |
|----------|--------------------------------------|
| Արաբկիր  | Ժիրայր Անանյանի փողոց                |
| Արաբկիր  | Էլեն Բյուզանդի փողոց                 |
| Արաբկիր  | Սվետլանա Գրիգորյանի փողոց            |
| Արաբկիր  | Հրաչյա Թամրազյանի փողոց              |
| Արաբկիր  | Կարպ Խաչվանքյանի փողոց               |
| Արաբկիր  | Լևոն Խեչոյանի փողոց                  |
| Արաբկիր  | Ալեքսեյ Հեքիմյանի փողոց              |
| Արաբկիր  | Դավիթ Հովհաննեսի փողոց               |
| Արաբկիր  | Հենրիկ Մալյանի փողոց                 |
| Արաբկիր  | Մարո Մարգարյանի փողոց                |
| Արաբկիր  | Սլավիկ Չիլոյանի փողոց                |
| Արաբկիր  | Սոս Սարգսյանի փողոց                  |
| Արաբկիր  | Գևորգ Վարդանյանի փողոց               |
| Արաբկիր  | Աննա Տեր-Ավետիքյանի փողոց            |
| Արաբկիր  | Արմենուհի Տիգրանյանի փողոց           |
| Արաբկիր  | Հովսեփ Էմինի փողոց                   |
| Դավթաշեն | Հուլյսի ավան                         |
| Դավթաշեն | Դավթաշեն համարային փողոց             |
| Դավթաշեն | Փիրումյանների փողոց                  |
| Դավթաշեն | Աղաբաբյան փողոց                      |
| Դավթաշեն | Մելքումով փողոց                      |
| Դավթաշեն | Անդրանիկ Իոսիֆյան փողոց              |
| Դավթաշեն | Պարիս Հերունու փողոց                 |
| Էրեբունի | Արցախ թաղամաս                        |
| Էրեբունի | Աճեմյան փողոց                        |
| Էրեբունի | Ավանեսովի փողոց                      |
| Էրեբունի | Արին-Բերդի փողոց                     |
| Էրեբունի | Բեռնակիրների փողոց                   |
| Էրեբունի | Բուռնազյան փողոց                     |
| Էրեբունի | Գլինկայի փողոց                       |
| Էրեբունի | Դաշտենցի փողոց                       |
| Էրեբունի | Երկաթուղայինների համարային փողոց     |
| Էրեբունի | Թեյշեբանիի փողոց                     |
| Էրեբունի | Թորամանյան փողոց                     |
| Էրեբունի | Գրիգոր և Սարգիս Գուրզադյանների փողոց |
| Էրեբունի | Լոմոնոսովի փողոց                     |
| Էրեբունի | Լորիս Մելիքյան փողոց                 |
| Էրեբունի | Ծատուրյան փողոց                      |
| Էրեբունի | Ծխախոտագործների փողոց                |
| Էրեբունի | Կուստոյի փողոց                       |
| Էրեբունի | Կռիլովի փողոց                        |
| Էրեբունի | Մահարու փողոց                        |
| Էրեբունի | Միջուրինի փողոց                      |
| Էրեբունի | Մուշավանի 1-ին փողոց                 |
| Էրեբունի | Նոր Արեշ համարային փողոց             |

|          |                               |
|----------|-------------------------------|
| Էրեբունի | Նոր Խարբերդ այգ. Տար. Փող     |
| Էրեբունի | Որմնադիրների փողոց            |
| Էրեբունի | Չեռնիշևսկու փողոց             |
| Էրեբունի | Ջրաշենի համարային փողոց       |
| Էրեբունի | Սևանի փողոց                   |
| Էրեբունի | Սարի Թաղ թաղ.                 |
| Էրեբունի | Սուվորովի փողոց               |
| Էրեբունի | Սոֆիայի փողոց                 |
| Էրեբունի | Վարդաշենի համարային փողոց     |
| Էրեբունի | Օստրովսկու փողոց              |
| Կենտրոն  | Ադանայի փողոց                 |
| Կենտրոն  | Աղյուսագործների փողոց         |
| Կենտրոն  | Այգեստան                      |
| Կենտրոն  | Մանուկ Աբեղյան փողոց          |
| Կենտրոն  | Նիկոլ Աղբալյան փողոց          |
| Կենտրոն  | Թադևոս Ավդալբեկյան փողոց      |
| Կենտրոն  | Արմեն Թախտաջյան փողոց         |
| Կենտրոն  | Սերգեյ Մերգելյան փողոց        |
| Կենտրոն  | Գրիգոր Չուբարյան փողոց        |
| Կենտրոն  | Միքայել Չայլախյան փողոց       |
| Կենտրոն  | Գևորգ Զահուկյան փողոց         |
| Կենտրոն  | Արհեստավորների 1-ին փողոց     |
| Կենտրոն  | Արհեստավորների 2-րդ փողոց     |
| Կենտրոն  | Գրիգոր Տեր-Գրիգորյան փողոց    |
| Կենտրոն  | Գետառի փողոց                  |
| Կենտրոն  | Գրողների փողոց                |
| Կենտրոն  | Զավարյան փողոց                |
| Կենտրոն  | Իսահակ Ալիսանյան փողոց        |
| Կենտրոն  | Լեռ Կամսարի փողոց             |
| Կենտրոն  | Ծխախոտագործների փողոց         |
| Կենտրոն  | Կորի փողոց                    |
| Կենտրոն  | Հրանտ Շահինյան փողոց          |
| Կենտրոն  | Հովհաննես Կոզեռնի փողոց       |
| Կենտրոն  | Մարտի 8-ի փողոց               |
| Կենտրոն  | Շարա Տալյան փողոց             |
| Կենտրոն  | Չայկովսկու փողոց              |
| Կենտրոն  | Սիմեոն Երևանցու փողոց         |
| Կենտրոն  | Սուրբ Հովհաննեսի փողոց        |
| Կենտրոն  | Սուրենյանց փողոց              |
| Կենտրոն  | Տոլստոյի փողոց                |
| Կենտրոն  | Օմար Խայամի փողոց             |
| Կենտրոն  | Ֆիզկուլտուրիկների փողոց       |
| Կենտրոն  | Ֆրիկի փողոց                   |
| Կենտրոն  | Կոնստանտին Օրբելյան փողոց     |
| Կենտրոն  | Ալեքսանդր Հարությունյան փողոց |

|                  |                                     |
|------------------|-------------------------------------|
| Կենտրոն          | Էդվարդ Միրզոյան փողոց               |
| Կենտրոն          | Արտեմի Այվազյան փողոց               |
| Կենտրոն          | Էդգար Հովհաննիսյան                  |
| Կենտրոն          | Գոհար Գասպարյան փողոց               |
| Կենտրոն          | Գալոյան եղբայրների փողոց            |
| Կենտրոն          | Վանի 1915 թվականի հերոսամարտի փողոց |
| Կենտրոն          | Ոսկերիչների փողոց                   |
| Մալաթիա-Սեբաստիա | Արմին Վեգների փողոց                 |
